ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 28.11.2017թ. ԹԻՎ 150-Ա1 ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 9 հունվարի 2018թ.,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Պապոյան ՕԵՍ տնօրեն

Հանձնաժողովի գնահատող անդամ՝

Ա.Մստոև ԿԿԲ գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Ս.Դանիելյան <<Երևան>> ՕԵՍ կենտրոնի պետ

Հ. Բաբայան <<Երևան>> ԱԿԿ պետ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ՊԳՀԾ մասնագետ

ԿԿԲ օտար լեզվի մասնագետ Լ. Մուսախանյանը նիստին չէր մասնակցում

Օրակարգ

1. <<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ կարիքների համար Օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտացված (ավիացիոն) անգլերեն լեզվի ուսուցման ծառայությունների գնման մրցույթի մասնակիցների հայտերի բացում և գնահատում

Գ. Սարգսյանը տեղեկացրեց, որ գնումն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց տվյալ գնման առարկայի նախահաշվային գինը 2018թ. համար 25392400 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Ընկերության կարիքների համար <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/17>> ծածկագրով Օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտացված (ավիացիոն) անգլերեն լեզվի ուսուցման ծառայությունների գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել <<MLS international College>> ընկերությունը /հասցե՝ Merck House, Seldown,Poole BH15 ITW/: Հրապարակվեց <<MLS international College>> ընկերության գնային առաջարկը 131340 եվրո է (մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը):

Հանձնաժողովի նախագահ Ա. Պապոյանը տեղեկացրեց, որ մասնակցի գնային առաջարկը ներառում է ծառայությունների մատուցման համար նախատեսված ընդհանուր գումարը (66 կարգավարի ուսուցման համար): Նշվեց նաև, որ համաձայն 2018թ. ֆինանսական նախատեսումների՝ ընթացիկ տարում ուսուցում պետք է անցնեն 22 կարգավարներ:

Հիմք ընդունելով <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/17>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.5 կետը, ամրագրվեց 2018թ. համար մասնակցի գնային առաջարկը՝ 25343804 ՀՀ դրամ (կից ներկայացվում է ՀՀ կենտրոնական բանկի տվյալ օրվա փոխարժեքի հաշվարկի համաձայն):

Հանձնաժողովը քննարկման արդյունքում ***միաձայն որոշեց.***

1. Ընկերության կարիքների համար <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/17>> ծածկագրով Օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտացված (ավիացիոն) անգլերեն լեզվի ուսուցման ծառայությունների գնման ընթացակարգի մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<MLS international College>> ընկերությանը,

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/17>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումը,

3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին ներկայացնել <<ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/17>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 19.01.2018թ. ժամը 09.00 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ա. Պապոյան		Հանձնաժողովի նախագահ
Ա. Մստոն		Հանձնաժողովի անդամ
Ս.Դանիելյան		Հանձնաժողովի անդամ
Հ. Բաբայան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար